

~~375:372.8~~

Բ - 16

Պատկեռագիր, բոլոր յեղիքների միացեք

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ՍԵՐԻԱ № 1

ՔԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻԱՅՆԱԿԱՆ ՄԻՍՏԵՍԻ

Ծ Պ Ա Գ Ի Պ

1-ԻՆ ՑԵՎ, 2-ՐԴ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ
Հ Ա Մ Ա Ր

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Կ. ՅԵՐ. Մ. Կ. Կ.

ՅԵՐԵՎԱՆ

1924 թ.

0120-10.

375: ~~375~~

P-16

Lev

300

1338-50

ՔԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹ

ԾՐԱԳԻՐ

1003
11843

**1-ԻՆ ՑԵՎ՝ 2-ՐԴ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐԻ
Հ.Ս.Մ.Ա.Ր**

Σ U. U. U. P

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Կ. ՅԵՐ. Կ. Կ.

ՅԵՐԵՎԱՆ

1924 p.

ՀՅՈՒԱԶԱԲԱՆ

Հայաստանի կազմակերպության մեջ քաղաքագիտության աշխատանքների սիստեմ մացնելու նպատակով անհրաժեշտ համարվեց թարգմանել Անդրյանելիկոմի հրատարակած 1 ին և 2-րդ կատեգորիաների ծրագիրը:

Պիտի նկատել, վոր Անդրյանելիկոմը այս ծրագիրը վորոշ չափով հարմարեցրել ե տեղական (Անդրյանելիկոմի) պայմաններին:

Այս հարմարեցումը ամենակարեվոր նախապայմանն է, վորպեսզի քաղաքականերում անցնելիք նյութը մասսաների համար պարզ ու զուրածարս դառնա:

Կենաչոմի ագիտագրով բաժինը ձեռնարկի ծրագրային մասին և մեթոդիկական ցուցմունքներին ավելացնում ե հետեւյալ գիտողությունները, վորոնք մեր տեղական կազմակերպությունները պետք ե ոգտագործեն, յենելով աշխատանքի հաջողության տեսակետից անցնեն շոշափելի ու գործնական պարագմունքների:

1) Պարագմունքների ժամանակ, նյութը ունկընդիրներին ավելի մատչելի դարձնելու համար փաստեր և որինակներ բերել տեղական իրականությունից (Հայաստանի ու ավյալ գավառի):

2) Նախկին կարգերի խորտակման ու սոցիալիստական հեղափոխության մասին խոսելիս, պետք ե հիշել մեր յերկերը դաշնակների որոք: Հեղափոխության ու նրա անհրաժեշտության մասին խօսելիս տալ ավյալ վայրի համառոտ պատճենները:

3) Խորհրդային շինարարության մասին խոսելիս շոշափելի փաստեր բերել ավյալ գավառի կյանքից և

Նրանց մեջ կոմսոմոլիստաների ունեցած մասնակցությունից:

4) Յերիաշարժումը անցնելիս մի դասախոսություն հատկացնել Հ. Կ. Յե. Մ. պատմությանը;

5) Հոկտեմբերյան հեղափոխության մասին խոսելիս պիտի հիշել գաղութահայ աշխատավորության վերաբերմունքը դեպի Խ. Հայաստանը:

Հ. Կ. ՅԵ. Մ. Աննելումի ազիտ-պրոյ բաժին

ՀԱՂԳՐԱԳԻՑՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՄԻՍՏԵՄԻ

ՈՒՂԻՌՎ

1.

Քաղզրագիտության մեր աշխատանքի սիստեմատիզացիայի ու կազմակերպման անհրաժեշտությունն ակներև ե, Միանգամայն համարձակ կարելի յե ասել, վոր հակայական քանակությամբ առաջարկություն ժամանակ, վոր և յեռանդ ե վատնվել այս ուղղությամբ:

Ընդհանուր քաղաքական, հասարակական այն դարձացումը, վորը կոմսոմոլիստաց ձեռք եր բերում կազմակերպության մեջ, մասամբ նա ստոցվում եր քաղիմբակում և ակումբում, բայց գլխավորապես՝ կազմակերպչական, արտադրական ու տնտեսական աշխատանքու ընթացքում:

Առանձին, լավ աշխատող խմբակները մեր անցյալ կը թական աշխատանքները չեն բնորոշում, նըրանք միայն հաճելի բացառություններ են յեղել:

Նախկին մեր ազիտ-պրոյ աշխատանքների հիմնական սխալները հետեւյալներն են.

1) Աշխատանքի հաստատուն և միատեսակ ծրագեր չի յեղել, իսկ այդ հանգամանքը գրեթե անհնարին և դարձել համապատասխան ձեռնարկների մըշակումը:

2) Խմբակների կազմակերպությեան հարցն անկանոն և յեղել ինչպես պարապմունքների տեխնիկայի տեսակետից, նույնականացների նպատակահարմար ընարության հարցում:

3) Ծրագիրների անցման համար ժամկետներ չեյին սահմանված և հաստատուն ողակներ, վորոնք պարտադիր լինեն յուրաքանչյուր կոմսոմոլիստի համար, չեն յեղել:

4) Դաստիարակչական աշխատանքի առանձին

ահսակների միջև ներքին կապակցությունը բացակայել է: Ակումբային մասսայական աշխատանքը, քաղլիմբակի, անցգացվող կամպանիայի, բջիջների աշխատանքները չեյին համակարգված իրար հետ այնպիսի ձեվով, վօրպեսզի մեկը մյուսին լրացնի:

5) Գրեթե բոլորովին հաշվի չեյին առաջում կումունիստական ժանկավարժական նիմունքները անդական պայմանները հայլին և այլն Հաշվի առնելով հընդամյա աշխատանքի փորձը, ներկայիս մենք անցնում ենք սիստեմատիկ, նախամուտածված և ձետեղական ագիտագրուած աշխատանքների:

Ռ. Կ. Յե. Մ. Յ-րդ Համառուսական համագումարն այդ ուղղությամբ ընդգծել եւ գլխավոր ուղիները, վօրոնց գումարը կազմում է քաղկերության միտանական սիստեմի երրորդունը: Միասնական է վորովիետել նա նախաճեռում եւ դաստիարակչության միասհասակ ձեվեր ամբողջ կոմմունիստական յերիտասարդության միության համար:

Սիստեմ ե, վորովիետե նա խիստ սիստեմատիկացիայի յև յենթարկում մեր ամբողջ ագիտագրուած աշխատանքները:

Քաղաքասիառակցություն եւ, վորովիետե դաստիարակության հիմնական նպատակն է համարվում յուրաքանչյուր կոմմունիստի դաստիարակային գիտակցության և ժամանակակից կյանքի, այսինքն՝ հանուն կոմմունիզմի վերջին դարաշրջանում մղված դաստիարակային բաղխումների պրոլետարական ըմբռնողության մշակումը:

II.

Վորպեսզի հնարավոր լինի մոռավորապես միեվնույն կրթական մակարդակ ունեցող անդամներին քաղլիմբակներում տեղափորել և դաստիարակչական աշխատանքների ձեվերը հարժարեցնել հաջորդաբարդվարացնող մի քանի աստիճանների, քաղկերթյան միանալիքների բաժանումը յերեք հիմնական կատեգորիաների:

I ին կատեգորիային պատկանում են քաղլաքանապես միանգամայն անդրագետները:

II կատեգորիային՝ վորոշ զիանելիքներ ունեցողները:

III-ին՝ վորոնք վորոշ այատրաստություն բատանաւուց հետո կարող են ինքնուրուցն կերպով վերամշակել նյութը:

I-ին կատեգորիայի համար ոգտագործվում է քշիջը, ակումբի գահինը և վորոշի անհրաժեշտ ստորին տիպի քաղլիմբակը: (Տես I ին կատեգորիայի ծրագիրը):

II կատեգորիայի համար ոգտագործվում է քաղլիմբակը կամ քաղրագիտության դպրոցը (տես ծրագիրը) և III կատեգորիայի համար՝ պրոպելուկաթիվները:

Այս յերեք կատեգորիաները ունին կրթական աշխատանքի համատառուն նախագիծ, վարը անցնվում է վորոշ ժամանակամիջջում: Այսպիսով համատառում են հետեղողական ողազներ, վորոնցով պետք ե անցնի յուրաքանչյուր կոմսոմոլիսա:

Առաջադրվող ծրագիրը կազմված էն Անդրկովկայան բոլոր կազմակերպությունների համար: Ծրագրի մեջ փոփոխություններ կարող են մտցվել միայն յերելով նրա կիրառման փուլից և միմիայն Անդրյերկոմի ազիտ պրոպել, բաժնի միջնորդի:

Նման միաժամանակ ծրագրներով ղեկավարվելով մենք կարող կը լինենք: —

Առաջին՝ աստիճանաբար լավացնել ու կատարելագործել այդ ծրագրները, ոգտակելով Անդրկովկայան մասաւաբով նրա կիրառման փորձից և յերկրորդ մշակել ու հրատարակել այս ծրագրին համապատասխանող ձեռնարկներ:

(Այժմ պատրաստվում է մամուլին հանձնելու յերեք ձեռնարկ, մեկը I-ին և յերկուսը II կատեգորիաների համար):

Ծրագրների ընդհանուր կմախքի միաձեռությունը չի պարտավորում նրանց բառացի կիրառելուն Անդրկովկայան բոլոր վայրերում: Ընդհակառակը, ծրագիրն այնպես ե կազմված, վոր հնարավորություն և առլիս հիմնական թեմաները պատկերազողութեր առաջացնել աեղական պայմանների համաձայն: Տեղական պայմաններ ասելով պետք ե հասկանալ յերկրի

եկոնոմիկան, ազգաքնակչության ու Յերիտամիության կենցաղը, տեղական խորհրդային մարմինների փորձն և աշխարհագրական պայմանները:

Ծրագրի այս կողմը, վորը հիմնված ե գործնական պրոպագանդիստական աշխատանքի անհրաժեշտության վրա, ըստոնելի նյութից ու մոտիկից տանում ե գեղի ավելի ճեռուում ու բարգլւուն, հիմնական խնդիրների անջատման նպատակն ե նրանց ջուրջը կինարօնացնել անցկացվող նյութը. Բանն այն ե, վոր այն բուժություն, ինչ վոր մշակվում ե քաղխմբակում, ամերոջովին չի յուրացվում, ան խուսափելիորեն մի մասը մուացվում ե և հաճախ դա կարևորագույն հանդամանք ե:

Մինչդեռ ամբողջ նյութը պատկերավորելով և ավելի կարելի աշխատանքի նյութից կինարօնական գաղճնելով, վրատահ ենք, վոր զրանք համենայն դեպք կը յուրացվնի: Բացի այդ բուն նյութի տուանձնացուումը ասհն մի զրույցի ամբողջացուումն իւղ լրացութեացնուում ե պատկերավորված նյութի ըմբռնումը և պարզում նրա նշանակությունը:

Այս ծրագրներով քաղխմբակների աշխատանքները կանոնավորելով՝ մենք գործի մի մասը միայն կը կատարենք: Մսում ե այս ծրագրները կոմ. դաստիարակության սիստեմի հիմնական նյութ համարելով ագիտակությունը աշխատանքները յեվս այնպես վերակազմել, վոր նրանք ըլլորն ել սկսած գորական խմբակից ու վերջացած բնագիտակուն խմբակով, լըրացնեն ու պատկերավորեն այն հիմնական ծրագիրը, վորը մենք անցնում յենք քաղխմբակներում: Միայն նման միաձույլ կազմակերպված աշխատանքով կը կարողանանք կոմունիստի մի ամբողջական աշխատանքությունը մօակել: Միայն այս ձևով մենք կառուսափենք քաղխմբակների իրարից կարգավածությունը: Այս խմբական առաջնորդությունը կունենա ամբողջական առաջիմական նշանակություն:

Օ. Կ. ՏԵ. Պ. Ա. Ա. Գրյեւկոմի Ա. Գիտ. Պրառ Ռամիկ

I-ին ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ԽՄՐԱԿԿԱՐԻ ՄՐԱԿՐԻ ՄԱՍԻՆ

I-ին կատեգորիան, համաձայն համառուսական Պ-րդ կոնֆերանսում ընդունված համակարգության ոգտագործում ե բջիջն ու ակումբի դահլիճը.

Առաջին կատեգորիային պատկանում են միության այն անդամները, վորոնք բոլորովին զուրկ են քաղաքական գիտելիքներից, դրանք գլխավորապես նորեկներն են, վորոնք գեռ չեն անցել միության դաստիարակչական գպորցի բովածի: Նկատի ունենալով, վոր մեղ մատ Անգրկովկասում, միությունն առանձնապես աճեց մասսայականացավ 22-23 թվերին պիտի ասել, վոր նորյեկները, այսինքն I-ին կատեգորիային պատկանող անդամները մեղանում ճնշող մեծամասնություն են կազմում:

2. Խորապես գիտակցելով միատեսակ դաստիարակչական աշխատանքի առավելություններն՝ այնուամենայնիվ պետք ե հիշատակենք, վոր քանի վոր,

ա) Միության անդամների ճնշող մեծամասնությունը պատկանում է I-ին կատեգորիային,

բ) Մեր ակումբները թե ֆինանսական և թե մեթոդական աշխատանքի անսակեալից անկազմակերպ

ու անկանոն են:

գ) Համեմատաբար թույլ են բջիջներում տարվող դաստիարակչական աշխատանքները, մենք գեթ առաջին շենք կարող Լ-ին կատեգորիայի դաստիարակչական աշխատանքներն արդյունավետ դարձնել, մինչև վոր չկազմակերպենք նրա անդամների համար քաղգրագիտության սառըին ափակի հատուկ խմբակներ:

3. Այս ուղղությամբ տարվող աշխատանքները Ո. Կ. Ց. Վ. Անգրյերկոմի պլենումի վորոշումներին համաձայնեցնելով, անհրաժեշտ ե մի քանի այդպիսի վարձնական խմբակներ կազմակերպել, միաժամանակ պետք ե մանրամասն կերպով ուսումնասիրել այդ խմբակների կազմակերպության աշխատանքների փորձը:

4. I-ին կատեգորիայի խմբակները ըստ հնարացության կազմակերպվում են ակումբներին կից և ունեն աշխատանքի ներկայական պահանը:

1. Կ. Ց. Վ. Ս. կանոնադրությունը:

2. Կ. Ց. Վ. Ս. ծրագիրը:

ա) Կապիտալիզմի վիլուգումն ու սոցիալիստական հեղափոխության գարաշը:

- բ) Խորհրդային շինարարությունը:
գ) Կիտությունը ուժ ե:
3. Ռ. կ. Յե. Մ. պատմությունը:
4. Հոկտեմբերյան հեղափոխության ալիքները
Արեվմուտքում և Արեվելքում:
5. Նկատի առնելով խմբակի անդամների չափազանց թույլ պատրաստությունը, պարտպմունքների կարճատեգությունը նույնիսկ այս փոքրիկ հարցերը մանրամասն ու լրիվ չի կարելի մշակել:
- Այսպես օրինակ, յեթե առանց նախորոք վորոշած շրջանակների սկսենք մանրամասն անցնել խորհրդային շինարարությունը լրիվ ծավալով մենք չափազանց կը ծանրաբեռնենք նյութը և չի սաացվեցանկությունում ու տպագորությունը:
- Դրա համար ել ներկա ծրագրի մեջ առանձնացված են բուն հիմնական մտքերը, վորոնց շուրջը պիտի կառուցել այս կամ այն հարցի ուսումնամիբությունը:

I կ. ՅԵ. Մ. ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կանոնագրության կետերի ընթեցում

Հարց.— Դու մաել ես Կոմյերիամիության մեջ՝ վորը իր շարքերում հարյուր հազարավոր յերիտասարդ բանվորներ ու գյուղացիներ և համախմբում, ինչ ես կարծում, այդպիսի մեծ կազմակերպությունը կարող ե նպաստակահարմար և արդյունավետ աշխատանք առանձ առանձ, յեթե չունենա ներքին կարգավահություն և յուրաքանչյուր անդամի աշխատանքի հաստատուն կանոններ:

Պատասխան.— Վաչ, մեր միությունն ինչպես և ամեն մի կազմակերպություն, պետք է ունենա հաստատուն կանոններ—այսինքն կանոնագրությունն ուստի առաջին կետի շուրջը կոլեկտիվի յուրաքանչյուր անդամի պարագանություններն են համախմբում, այսինքն կանոնագրությունն ուղարկում և վորպես կոլեկտիվիստական բարոյականության օրինակ ու կենցաղային հարցերի լուսաբանման համար հիմք և ծառայում:

II կ. ՅԵ. Մ. ԾՐԱԳԻՐԸ

Կապիտալիզմի վկուգումը ու սոցիալիստական հեղափոխությունների գարաւշականը

I ի բ գրուց

§ § 1 և 2 (շարունակություն)

Կենտրոնական նյութը, — Մարտկությունը կանգնած ե հիշյալ հարցի առաջ. կամ կուլտուրայի կործանում ու մահացում և կամ անցումն դեպի նոր հասարակակարգ, այսինքն դեպի կոմմունիզմ: Կապիտալիստական (բորժուական) հասարատկակարգի քայլայումը դրդում ե պրոլետարիատին, վոր միակ ուժեղ, կազմակերպված ու գիտակից դասակարգն ե, տապալիլ կապիտալիզմի լուծը և ամբողջ աշխարհում հաստատել պրոլետարիատի դիկտատուրա, վորի միջոցով մենք կը հասնենք կոմմունիզմին:

2-րդ գրուց

§ § 4, 5 և 5 (շարունակություն)

Կենտրոնական նյութը, — Կոմմունիզմի համար մըդկող պայքարը համար ե ու յերկարատե, վորին կը մասնակցեն մի քանի սերունդներ: Բանվորագյուղացիական յերիտասարդությունը կոմմունիստական կուսակցության պահեստն ե, և ակտիվ մասնակցություն ե ցույց տալիս պրոլետարիատի պայքարին ու շինտրայությանը: Նա այդ անում ե իր կազմակերպության կ. ՅԵ. Միության միջոցով: կ. ՅԵ. Մ. համախմբումը ու կազմակերպում ե յերիտասարդ բանվորությունը, վորպեսզի մասնակցի կոմմունիզմի համար մղող պայքարին և ամբողջ կյանքը նոր հիմունքներով կառուցելու աշխատանքներին:

Յուցանութեան.— Առաջին զրույցում պետք է անցնել կապիտալիստական հասարակարգի անկման ու սոցիալիստական հեղափոխության անհրաժեշտությունը՝ կարդալով ծրագրի առաջին յերկու կետերը:

Յերկրորդ զրույցը մատնանշում ե յերիտասարդության դերը կամունիզմի համար մղվող պայքարի մեջ: Յերկրորդ զրույցի հիմնական նյութը ծրագրի կենտրոն և կազմում:

§ § ի տեղափոխությունը 2-րդ զրույցի մեջ նըա

համար և արված, վորպեսզի 1 ին դրույցը անցնելուց
հետո հեշտ լինի անցնել 4-րդ Տ-Ը:

Թե 1 ին և թե 2 րդ գրույցները խորացվում և
պարզաբանվում են ծրագրի համապատասխան կետերի
ընթերցանության ընթացքում:

ԽՈՐԴՐԴԱՅԻՆ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

I գրույց

ԿԵՑՄ ծրագրի 13, 13, 14 § ը սահմանադրության հիմունքները՝ Հստրությունների դասակարգայնությունը և ֆեղերացիան:

Կենտրոնական նյութը.—Խորհրդային շինարարությունը—համաշխարհային դասակարգային պայքարը՝ զրածակատի առանձին մասն և Յուրաքանչյուր կոմսոմոլիստ իր ամբողջ յիանդը պարտավոր և իսպագնել խորհրդային կարգերի ամրապնդան համար:

II գրույց

Խորհրդային իշխանությունն ու գյուղացիությունը, զողումը, քաղաքի շեֆությունը գյուղի հանդեպ, քաղաքի բջիջների կուլտուրական շեֆությունը գյուղական բջիջնորը նկատմամբ:

Խորհրդային հանրապետությունների պաշտպանությունը, բանակն ու նավատորմը: ԱՅԵՄ շեֆությունը նավատօրմի նկատմամբ:

Ցերկու շեֆություն:

1) նավատօրմի վրա—հանրապետության պաշտպանության համար:

2) Գյուղի վրա—գյուղացիության հետ մերձեցում ստեղծելու համար:

Կենտրոնական նյութը.—Բանվոր դասակարգի հաղթանակի գրավականն և խորհրդային իշխանության ու նրա անահության ուժիղացումը գյուղի ու քաղաքի զոդումն և և լով կազմակերպված պաշտպանությունը, վորը արդյունաբերության, վերականգնման ասպարիզում պիտի պաշտպանի մեր աշխատանքն ու առաջերկյալ կոպիտական վրա:

Յուցմութեներ.—1-ին դրույցը, ինչպես և նա-

և որդները պիտի կառուցվի ծրագրի համապատասխան կետերի ընթերցման հիման վրա, հիմնավորագետ մշակելով մեր սահմանադրության սկզբունքները:

Առանձնապես պետք է շեշտել դասակարգային ընտրությունների և ֆեղերացիայի սկզբունքները 2-րդ դրույցը մասամբ կառուցվում և ծրագրի «Խորհրդային հանրապետության պաշտպանության ասպարեզում» բաժնի հիման վրա, մնացյալը քննվում է գյուղի և քաղաքի զոդման ընթացիկ աշխատանքների հիման վրա:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՅԺ Ե

Գիտությունը մարդկային հասարակության կատարած փորձն և Համեմատել յարական կառավարության և խորհրդային իշխանության դաստիարակչական քաղաքականությունը:

Ցարական (բուրժուական) քաղաքականությունը նպատակ ունի շահուզորման ամրապնդումը: Մեր դասակարգային ինքնազիտակցության խորացումը, վորն անհրաժեշտ և հանուն կոմունիզմի մղվող պայքարի ու սոցիալիստական շինարարության համար:

Կենտրոնական նյութը.—Գիտությունը—արտգումարյան ընթացքում կուտակված փորձի արդյունքն և հասարակական աշխատանքի կազմակերպման զեկն և: Գիտությունը, շահուզորման նպատակով մենաշնորհված և յեղել աիրապետով դասակարգերի կողմից, և յիթե յերբեմն շնորհվել ե բանվորին և գյուղացուն, այն եկ այն չափով ու ձեռվ, վորը հաւաք և լեզել շահուզործողների համար:

ՍԻԾՄ պրոլետարիատի համար իշխանության գրավումով հասանելի զարձավ նաև գիտությունը, նապետք և աիրանա այդ կարենոր զենքին, վորն ավելի քան անհրաժեշտ և բանվոր յերիտասարդությանը:

Յուցմութեներ.—Այս գրույցը կառուցվում է ԿԵՑՄ ծրագրի «Բազումական աշխատանքները կետի հիման վրա:

Բուրժուական և մեր կրթության սիստեմի միջև զուգահեռական անցկացնելիս պետք է մտանաշերվոր բուրժուազիան շահուզորման նպատակներով գիտությունը խեղաթյուրել և:

Այս զրույցի նպատակն եւ խմբակի անդամների մեջ պարագելու ձգառում զարթեցնելը, այնպես վոր չպիտի վախենող մհծ քանակությամբ պատկերավորող նյութեր տալուց:

III Ռ. Կ. ՅԵ. Մ. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1.ին գրույց

Յերիտասարդական կազմակերպությունների առաջաւայրը Գերմանիայում ու Զվիգերիայում, վորպես պատանի վարպետացուների միություն: Կազմակերպությունների անտեսական եյությունը: 1907 թվի Շտուտգարդի կոնֆերուսը: Յերիտասարդության գերը սոցիալ-դեմոկրատիայի պառկտման գործում, Հակամիլիտարիտասական պրոպագանդա: Միջազգային յերիտասարդական որը: 1915 թվի Բերնի կոնֆերուսը: Արեգմուտքի յերիտասարդական կազմակերպությունները ներկայումս: Հոկտեմբերյան հեղափոխության գերը յերիտարժման պատմության մեջ: Կենսունական նյութ: Յերիտասարդության միություն առաջացավ, վորպես պատանի վարպետացուների անտեսական համախմբում:

2 րդ գրույց

Ռ. Կ. ՅԵ. Մ. պատմությունը հոկտեմբերից հետո: Համագումարները և նրանց զիշավոր մուծենասերը:

3-րդ գրույց

Յերիտարժումը Անդրկովկասում, Կազմակերպության առաջացումը: 1919 թվի Բազվի համագումարը: Անդրկովկասյան կազմակերպությունների միավորումը և Ռ. Կ. ՅԵ. Միության ձուլվելը: Յերկրային բյուրոների շրջանը: Անդրկովկասյան առաջին լեզակ համագումարը և նրա նշանակությունը:

Կենսունական նյութ: Պատմության ուսումնամիջությունը՝ դա հողային մարտական ավանդների հետ ծանօթանալն և հեղափոխական պայքարի փորձի հաջուկուն եւ:

Ցուցմունքներ—1.ին զրույցում յերիտասարդության կազմակերպության առաջացման պատմության հետ զուգընթաց կերպով բացատրել նաև յերիտարժման եյությունը:

2-րդ զրույցը կառուցվում ե՝ հենվելով Ռ. Կ. ՅԵ. Մ. համագումարների շարադրության վրա: 3-րդ զրույցը պետք ե առարկայացնել նայած թի խմբակը վորակեղ և գտնվում՝ Վրաստանում, Հայաստանում թե Ալբրեշտանում:

3-րդ զրույցում չափողանց անհրաժեշտ և պարզաբանել պատմության ուսումնամիջության անհրաժեշտառթյունը:

IV ՀՈԿՑԵՄԲԵՐՅՈՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՅԱՆ ԱԼԻՔ-ՆԵՐԸ ԱՐԵՎԱՄՈՒՏՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՐԵՎԵԼԳՈՒՄ

Այս զրույցը հիմքում ե ընթացիկ մոմենտի վրա: Կենցունական նյութ: — Հոկտեմբերյան հեղաշըրջումը կազմակերպմի ճակատի ճեղքումն ե ու համաշխարհային սոցիալիստական հեղափոխության սկիզբը:

Փորձը ցույց տվեց, վոր խմբակային պարագմունքները, կարելի յեւ արդյունավետ դարձնել այն գեղագում, միայն, յեթե հաշվի առնվի խմբակների առանձնահատկությունները և յուրաքանչյուր անդամի զարգացման մակարդակը, այդ պատճառով անհրաժեշտ և դասընթացքի սկզբում կազմակերպել նախնական զրույց, ուր զեկավարը պետք ե ծանօթանական միջակի ու մեն մի անգամի ենք: Ներածական այդ զրույցը կարելի յեւ նվիրել խմբակի կազմակերպչական հարցերին կամ ներկա մումենափին:

Ներկա շարքը բաժանվում ե 12 պարագմունքի—

- | | | |
|--------------|---|---|
| 1 Պարագմունք | — | ներածական զրույց: |
| 2 | « | ԿՅԵՅՄ կանոնադրություն: |
| 5 | « | ԿՅԵՄ ծրագիր: |
| 3 | « | ԱԿՅԵՄ պատմություն: |
| 1 | « | Հոկտեմբերյան հեղափոխության անհիքներն Արևմուտքում և Արևելքում: |

Շաբաթական մի պարագմունք ունենալու գեղքում, գտնվնթացքը պետք ե վերջացնել յերեք ամբողջությունը:

սում: Յեթե տարրական խմբակներ չեն կազմակերպված, ակումբային շարքերն ու բջիջային պարագառունքները պետք ե կազմակերպվեն այս ծրագրի բովանդակության համաձայն:

2-ՐԴ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ԳԱՂԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐԻ ԱՌԹԻՎ

Յեթե քաղխմբակների մի քանի հին ծրագիրներ աչքի անցկացնենք, կը անմանենք, վոր դրանք ծանրաբեռնված են հակայական մատերիալով, այսպես վոր նույնիսկ ինքը դասախոսը հաճախ դժվարանում ե պարզաբանել նյութը, ուր մնաց թե քաղխմբակի անդամները կարողանան յուրացնել վրովիճակ քաղխմբակը մի քանի ամսվա ընթացքում շաբաթական մի պարապմունք ունենալով, չի կարող հասարակական քաղաքական լայն դաստիարակություն տալ:

Անհրաժեշտ է՝

Նախ՝ պարզ վորոշել այն խնդիրները, վորոնք դրվում են քաղխմբակի առաջ:

Յերկրորդ՝ անցնելիք մատերիալը կառուցել մի քանի հիմնահան մաքերի շուրջը, վորպեսզի հարուցելով մի վորեկե միտք, նյութ, (որինակ՝ մարդը տեխնիկակի ազգում ե բնության վրա, վորպեսզի բարձրարի իր կարիքները) կարելի լինի պարզաբանել այն ուսուշ պատկերավոր նյութերով:

Քաղխմբակի հիմնական խնդիրն ե՝ միության անդամներին մղել զեպի գիտություն, տալով դրան մարդուստական ճիշտ սպառություն: Քաղխմբակի պարապմունքներն այս հիմնական նպատակին յենթարկելով, մենք կը հասնենք ծրագրի ճկունության, վորը կարող ե փոփոխվել կամ կրճատվել համաձայն տեղական պարագաներին՝ առանց հետեւղականության ու կապին վւաս հասցնելու,

Քաղխմբակի ծրագիրը պետք ե կառուցվի խըմբակի անդամների համար հասկանալի, մոտիկ և շոշափելի նյութերի շուրջը:—

Այդպիսի նյութ կարող ե ծառայել:

ա) Յերկրի անտեսական աշխարհագրությունը:

բ) Տեղական արտադրությունը:

- գ) Ազգաբնակչության ու կ. Յ. Անդեկին անդամնության ամսագիրը:
դ) Տեղական խորհրդային իշխանությունը պատմական ամսագիրը:

արթիվ:

Զարդարացնելով այն միաքը, վոր քաղխմբակը իր անդամներին պետք ե գեպի գիտությունը մղի, այսինքն բնորոշելով քաղխմբակի հիմնական խնդիրը, պետք ե նկատի ունենալ հետեւյալը:—

ա) Քաղխմբակի ծրագիրը պետք ե արտահայտի ժամանակակից կյանքի դասակարգային բրոնողությունը ընդգծելով, վոր գասակազմակից ըմբռնողության հետ միասին յուրաքանչյուր պրոլետար պետք ե ցուցահանի նաև իր գասակարգային ակտիվությունը: Ամեն մի ընկերոջ ակտիվության ոգասակարության չափը կը բարձրանա նրա վարակավորման հետ—սրան հետեւյում ե գիտության և կրթության անհրաժեշտությունը:

բ) Ծրագիրը պետք ե պարզի տնտեսության կապը քաղաքականության, զրականության ու գիտության հետ գաղափար տալով տնտեսության գիտելիքական զարգացման մասին՝ դասակարգային կովի ու զարգացման միջոցով:

Ելոյ կապի մօսկովյան գգալի կերպով կը հետացնի ակումբային խմբակների աշխատանքը և խմբակի անդամների ինքնազարգացման աշխատանքին զարկ կտա:

գ) Դաշընթացքն անցնելու ընթացքում դեկավարը պետք ե ուղղություն տա խմբակի անդամների ընթերցանությանը՝ տալով նրանց մեթոդիկական ցուցանիւններ ու ծրագրի ամեն մի կամ շուրջ յեղած գրականությունը:

2-ՐԴ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ԳԱՂԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐԸ Տարեկան

1) Յեր արտադրության հիմքերը (տնտեսական աշխատավայրության ներածություն, (2 զրույց):

2) Տեխնիկայի պատմությունը (կապված տնտեսական ձևերի պատմության հետ, (2 զրույց):

3) Կապիտալիզմի քայլքայումը և սոցիալիստական հեղափոխությունների զարեցանը, (2 զրույց):

ՀԱՅԱՍՏԱՆ
ՀՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
7/11. 1922

- 4) Հոկտեմբերյան հեղափոխությունն ու դասակարգերի մղած պայքարը՝ իշխանության համար, (Շ զրույց);
 5) Անդրկովկասի խորհրդայնակառմը (1 զրույց);
 6) Ռ. Կ. Կ. ու խորհրդային իշխանությունը (2 զրույց);
 7) Հոկտեմբերյան հեղափոխության ալիքները Արևմուտքում և Արևելքում (2 զրույց);
 8) Կոմինտերնը, նրա խշնամիներն ու դաշնակիցները (2 զրույց);
 9) Եերիտասարդ գվարդիա, Կ. Յե. Մ. (2 զրույց);
 10) Ն. Տ. Ք ից գեղպի սոցիալիզմ (1 զրույց);
 11) Խնչպիս դառնալ կոմունիստ (1 զրույց);

I. Ի Բ Ժ Ո Ր

ՄԵՐ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ի Բ Գ Ր Ո Ւ Յ Ո

Գործարք-արհեստանոց: Ի՞նչ ե պետք գործարանին, արհեստանոցին՝ վաճառյութ, հում նյութ, աշխատանք:

Վառելանյութ—Վորտեղից ե ձեռք բերվում, Բազու (նազթ) Տկիրուի, Դոնբաս (քարտածուխ) անտառներ և այլն:

Հում նյութ—Կիսափաքրիկատ: Հում նյութ ձեռք բերելու որինակներ (ըստ հնարավորին շրջակացից վերցրած):

Ռեխատանք—բանվոր:

Դործ սրանում մասնակցում են՝ աշխատանքը, այսինքն մարդը, ընության հարստությունները, հում նյութ ու վառելանյութ: Դործարանում մշակում են մարդկային հասարակուրյան համար ոգտակար ապահովեներ:

Կենտրոնական նյութ. — Մարդը տեխնիկապես ազգում և բնության վրա, վորպեսզի բավարարի իր կարիքները:

2 Ր Պ Գ Ր Ո Ւ Յ Ո

Անդրկովկասի տնտեսությունը սերտորեն կապված է համաշխարհային անտեսության հետ:

Վառելիքն և հում նյութ ստացվում են հանքերից, տնկարաններից յերկրագնդի զանազան վայրերում:

Կիսաթաքրիկատ—Ստացվում ե մյուս գործարաններից ու զանազան վայրերից:

Տվյալ գործարանի արագրությունը կարելի յեղագործել մի այլ գործարանում: Մի արտադրության կապը մյուսի հետ հաղորդակցության, խճուղի, յերկաթուղի, շոգենավիր, առևկտրական գրասենյակներ, արեստանքում և կիմարզություններ: Մարդկային աշխատանքը կամ արագուում ե կամ ծառայում է արտադրության համար: Ամեն մի արտադրություն այնտեղ ե զարգանում, ուր նրա համար նպաստավոր պայմաններ կան: Մեջմ և ամբողջ աշխարհի տնտեսական քարտեզը:

Կենտրոնական նյութ. — Գործարանը, արհեստանոցը, հանքերը, հիմնարկությունները և այլն համաշխարհային անտեսության բջիջներ են հանդիսանում:

Ցուցմունքներ 1 ի Բ Ժ Ո Ր ի առբիվ. — 1-ին շարքի խնդիրն ե լուսաբանել մարդկային աշխատանքի նրանակությունը և տեղը բնության մեջ ու խմբակի անդամներին ընդհանուր կերպով ծանոթացնել Ս. Խ. Հ. Մ. և յերկրագնդի տնտեսական աշխարհագրության հետ: Տնտեսական աշխարհագրության մասին պետք ե տրուցեն ընդհանուր տեղեկություններ: Գիշ թե շատ մանրամասն կարելի յե կանգ առնել Ս. Խ. Հ. Մ. և առանձնապես Անդրկովկասի տնտեսական աշխարհագրության վրա: Յերկու զրույցներն ել հիմնվելու յեն շոշափելի որինակների վրա, վորոնք պիտի վերցնել շրջակայից:

Ասեն մի քաղաքում առանձնացվում ե մեկ կամ մի քանի գործարան վորի որինակով ներկա ծրագիրը կարելի յե ավելի առարկայացնել: Յեթե բջիջն մոտիկ չի գտնվում այն գործարանից, վորի համաձայն մշակված ե ծրագիրն, այն ժամանակ անհրաժեշտ ե կազմակերպել եքսկուրսիա վեպի գործարան:

2 Ր Պ Ժ Ո Ր

Տեխնիկայի պատմությունը (կապված անհեսական ձեվերի պատմության հետ):

1-ին գրույց

Մարդը հասարակական կենդանի յեւ ուրատդրության գործիքներ պատրաստող: Նախնական կոմունիզմ:

Քարե-զար.—(Զեռքի հարվածից՝ քամելու գործիքներ, կողիտ կերպով միացած և սրիչ գործիքներ):

Բրոնզի զար.—(Արճիճյա և անագ և գործիքներ)։ Կենդանիների ընտելացումը, Բրիչային յերկրագործության ժամանակաշրջանը միացած անատնապահության հետ ֆեոդալական հասարակարգ:

Կենտրոնական նյութ:—Տեխնիկան կանգ չի առնում, նորանոր գյուտերի շնորհիվ, վորոնք մարդկային կուտակված փորձի արդյունքն են կազմում, նաշարունակ առաջանում եւ:

Հարյուր տարի հետո մեքենաները զգալի չափով կատարելագործված կը լինեն: Հարյուր տարի տռաջ մեքենաները շտա ավելի հասարակ եյին, քան թե հիմա յեն:

2-րդ գրույց

Քաղաքների զարգացումը վորպես առևտրական կենտրոնի: Առևտրը զարգացումը, մեծ գյուտերի դարշարջանը: (Ամերիկան, ճանապարհ դեպի Հնդկաստան և այլն), Արևելատարական, անայնագործական արդյունագործությունից դեպի գործարան: Բուրժուազիայի ուժակացումը, Բուրժուազիայի վերջնական հաղթանակը Փետրալիների դիմ ունեցած պարագում: (Բուրժուական հեղափոխության դարաշրջանը:)

Խոշոր ինքուսարիայի զարգացումը: Պըոկետարիատի աճումը և հակագրությունը բուրժուազիային: Տեխնիկայի կատարդը զարգացումը՝ յելեկտրականություն, գոլորշի:

Կենտրոնական նյութ:—Տեխնիկան սպառազործվութեամբ և աիրակետով դասակարգի կողմից:

Յօւցմունքներ 2-րդ շարքի տորիվ:—2-րդ շարքի էիմասկան խնդիրն ե՝ հասկացողություն առևտեխնիկայի դիալեկտիկական զարգացման մասին՝ պարզելու անտեսական ձևերի ու տեխնիկայի զարգացման փո-

խաղարձ ազգեցությունն ու նրանց միջև յեղած կապը: 2-րդ շարքը կապված ե 1-ի հետ հետեւյալ բովանդակությամբ:—

1-ին շարք՝ մարդը տեխնիկապես ազգում ե բնության վրա, վորպիսզի բավարարի իր կարեքները: 2-րդ շարք՝ մարդը տեխնիկապես ազգում ե բնության վրա արտադրական գործիքների միջոցով, վորոնք անգամաց կատարելագործվում են:

Զափազանց կարելով և Ռ-րդ շարքով հասկացությունն տալ վոր տեխնիկայի զարգացումը կուտակված փորձի արդյունք ե, միաժամանակ պետք ե շեշտիվ, վոր աեխնիկայի զարգացումը զնալով արագանում ե, այսպես որինակ, քարից մինչև մետաղը հաշվում ե 1000 ամյակներ, մետաղն զործիքներից մինչև շողեմեքենան հարյուրավոր զարեր, իսկ կապիտալիստական տեխնիկան զարգանում ե տաս ամյակներով:

Ցերեկ զրույցների ընթացքում իլ պարզել այն միանքը, վոր տեխնիկայի զարգացումն արագությանը ուղղուղ հարթերական և հավելյալ ժամանակին:

Մանուրուրյան:—1-ին և Ռ-րդ գրույցի արանքում լավ աշխատող խմբակներում, արվում ե մի զրույց յեզմ նվիրված տեխնիկայի ու անտեսական ձևերի և իդիոլոգիայի կապի պարզաբանման:

Այդ կապը պիտի պատկերավորել Փեողալիզմի որինակով:

Ժեզովլիզմ:—Բնական տնտեսություն: Կաթոլիկություն (սխոլատիկա): Անշարժ տնտեսություն: Անշարժ իդիոլոգիա՝ յերկիրը անշարժ ե, նա և աշխարհի կենտրոնը:

Քաղաքի զարգացումը:—Առևտրը, գործարան, այն ժամանակական հեղափոխական բուրժուազիայի ծընունդը, Կոոպերատիվուս—յերկիրը շարժվում ե, նա կենտրոն չեւ:

Կապիտալիզմի 3-րդ շարքի քայլքայումը և սոցիալիստական հեղափոխությունների դարաշրջանը:

I գրույց

Կապիտալիզմը վորպես ազգանքային խոշոր արտադրություն՝ հիմնված զարգու աշխատանքի վը վա: Արտադրության միջոցների կողմից մենաշնոր-

հումը կապիտալիստների դասակարգին: Բանվորական ուժի շահագործումը: Շահագործման եյությունը՝ հավելյալ ժամանակ, հավելյալ արդյունք: Դասակարգային պայքար: Գործադուներ: Պայքար բանվորական որվա կրճատման համար:

Կենցութական նյուր:— Կապիտալիստական արտադրության ընթացքում արողետարիատի ու բուժուազիայի շահերը ուժեղ կերպով բաղմանք են իրար:

II. Զբաւյց

Ապրանք և շուկաներ. կապիտալիստական արտադրության ճնշաժամերը, վորպիս արտահանության ճնշաժամեր: Կապիտալի կենտրոնացումը (տրեստներ, սինդիկատներ, բանկեր), կապիտալի վարչացումը ջընջում և ազգային սահմանները:

Կապիտալիստների յերկու խմբեր պատերազմից առաջ (Անգլիա ու Գերմանիա), վորոնք կովում եյին շուկաները իրար մեջ բաժանելու համար, Համաշխարհային պատերազմը, վորպիս կապիտալիզմի ահռելի ճնշաժամ: Դասակարգային պայքարի սրվելը պատերազմից հետո: Կապիտալիստական հասարակակարգի քայլայման անխոստափելիքությունը: Հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանում դա համաշխարհային սոցիալիստական հեղափոխության սկիզբն է:

Յուցմունքներ 3-րդ օրերի առթիվ:— Առաջին զրույցի խնդիրն ենդղայնել ու շոշափելի դարձնել 2-րդ շարքի այն հիմական միտքը, վոր տիրապետող դասակարգը տեխնիկան ոգտագործում և շահագործման նպատակներով:

Հնդկանուր գծերով պարզելով շահագործման եյությունը, միաժամանակ կը պարզվի դասակարգային եյությունը:

Բանվորական որվա կրճատման համար մղվող պայքարը կապելով շահագործման եյության հետ պետք և շոշափելի սրինակներ բերել մի վոր և ետքնական ընույթ կրող գործադուլից:

Պատերազմի պատճառների մանրամասն քննությամբ յերկրորդ զրույցով վերջանում և այս ծրագրի պատմական բովանդակությունը: Պատերազմը արդ-

յունը և կապիտալի զտական ահռելի ճգնաժամի, վորեց չի կարող ազատվել կապիտալիստական հասարակաբարբարությունը:

IV ոգ օարք

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԴԱՍՎԱՐԳԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ

I. Ի՞ն գրաւց

Հոկտեմբերյան հեղաշրջումը (համառոտ նկարագրություն) Հոկտեմբերյան հեղափոխությունը հետեւ վանքուների և գյուղացիների զոդման: Հոկտեմբերյան գյուղացիական լոգունգները, զոդումը քաղաքացիական հորիների ժամանակ (զինվորական միություն) 1921 թ. պարենառությունը և ներկայիս միասնական գյուղատնտեսական տուրքը «մկրտու» ի հարցը:

Կենցութական նյուր:— Հոկտեմբերյան հեղափոխությունը, ազգական ու տնաեսական ճակատների հաղթանակը արդյունք և բանվորի և գյուղացու զոդման:

II բղ գրաւց

Կարող և դեմոկրատական (ապադասակարգային) պետություն լինել և արդյոք արեվմուտաքում կա նըման պետություն: Գոյություն ունեն այդպիսին Անդրկաստան մենշեվիկների, դաշնակների և մուսաֆաթների որոք: Պետությունը դասակարգերի անհաշա հակասությունների հետեւվանքն է: Կապիտալիստական հալածանքի պետական միխանիզմը (գոստիկանություն, դատարան, յեկեղեցի բանակ, մամուլ)

Կեթորնական նյուր:— Անհրաժեշտ և փշել կապիտալիստական մեխանիզմը և հաստատել պերետարիատի զիկատապուրայի պետությունը, վորպիսին և Սիէ միություն:

Յուցմունքներ 4-րդ շարքի առթիվ:— I-ին զըրույցը պետք և ամբողջովին կառուցել հոկտեմբերյան հեղափոխության շարադրության հիման վրա: 2-րդ զըրույցում ցուցադրելով պադասակարգային պետության անհարիսությունը, պետք և հող պատշաճել հետեւյալ զրույցի համար, վորը նվիշվելու յե Անդրկովկասի խորերդայնացմանը:

Վ ԵՊ ԾԱՐՔ

ԱՆԴԻԿՈՎԿԱՍԻ ԽՈՐՃՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ

Անդրկովկասի անջատումը Ռուսաստանի հեղափոխությունից:

Համաձայնողականների հաղթանակը, կոմ. կուսի գրությունը: Մարտի 10 ին Ալեքսանդրովյան պարտի զում կատարված գընդակահարությունը:

Բագվի խորհրդային իշխանության կործանումը:

Ազգային անհամաձայնություններ: Ազգային հանրապետությունների հազմակերպումը: Հայվրաց սկան պատերազմը, Ղարաբաղի հարցը: «Դեմոկրատների հաւածանքը»: Շրջափակման (ոչկուպացիայի) ժամանակաշրջանը: Համաձայնողականությունն ու նրա հետեւակները: Որինակներ, թե ինչպես դաշնակները, մուսափաթներն ու մենշևիկներն Անդրկովկասի աշխատավոր մասսաները մի քանի տարով կարեցին ուղարկած հեղափոխությունից, ազգայնականությունը հրահրեցին ու ընկան յեզրոպական իմպերիալիզմի ազդեցության տակը: Բանվորազյուղացիան մասսաների հեղափոխական շարժման աճումը: Ապստամբություններ Հայաստանում ու Վրաստանում: Հայաստանի, Աղրբեջանի ու Վրաստանի խորհրդայնացման պատմությունը: Համաձայնողական կուսակցությունների վերջնական քայլքայումը և վաշնչացումը:

Յուցմունքներ.—Այս կոնսպեկտն առարկայնացվում ու մանրամասնությունների յերենթարկվում նայած թե խմբակը փորտեղ և գտնվում՝ Ազրբեջանում, Հայաստանում, թե Վրաստանում: Մատնանշելով հեղափոխական շարժման աճումը, պետք է հիշատակել նաև յերիշասարդական կոմունիստական կազմակերպությունների զարգացումն ու վերելքը:

VI-ԵՊ ԾԱՐՔ

ՈԿԿ ՈՒ ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1 ի 6 գրուց

Սոցիալ դեմոկրատական կուսակցության պա-

ռակտումը, «մեծամասնականներ» ու «փոքրամասնականներ»: Փոքրամասնականների կատարած հականեղափոխական դերը: Ինչու մեծամասնականները վերանվանվեցին Ռուսաստանի կոմմունիստական կուսակցություն: Ծեկ ը պրոլետարիատի միակ ղեկավարնե (Ծեկ համառոտ պատմությունը): Ծեկ իշխանության գլուխն և անցնում: Մարքսիզմը գործնականում (Լենինիզմ): Պրոլետարիատի ու գյուղացիության հաղթանակը կոմկուսի ղեկավարության ներքո:

Անօտրոնական Յուոր.—Կոմկուսը միակ բանվորական կուսակցությունն ե, վորի առաջնորդությամբ միայն բանվորությունը կարող ե վերջնականապես հաղթանակել կապիտալիզմին:

2-ԵՊ ԳՐՈՒՅՑ

ՍԽՀՄ Սհմանագրության հիմունքները՝ խորհուրդներ, ընտրական նորմաներ, հողի ու աշխատանքի կողեքսը: Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Միությունը—ազգային հարցի լուծումը ըստ մեծամասնականների:

Ժամանակակից բուրժուական պարլամենտարիզմը, նրա սահմանադրությունը, նրա պրակարգական, (Ամերիկա, Ֆրանսիա):

Անօտրոնական Յուոր.—Պարզաբանել ՍԽՀՄ սահմանագրության զառակարգային բնույթը:

VII. ԾԱՐՔ

Հոկտեմբերյան հեղափոխության ալիքները Արեվմուտքում և Արեվիքիքում:

1.Ի Բ ԳՐՈՒՅՑ

Ռուսաստանի հոկտեմբերյան հեղափոխությունը համաշխարհային հեղափախության սկիզբն է: Հեղափոխությունները մյուս պետություններում: Գերմանական կայսրության տապալումը: Իշխանության անցումը բուրժուազիային: Գերմանական սոցիալ-դեմոկրատների կատարած դերը: Գերմանական պրոլետարիատի պատմաը հանուն իր հոկտեմբերյի: Առաջավոր բանվորների ապստամբությունը: Կար Լիբենելիսը լեզվ Ռուսական բուրժուազիայի շարժման ղեկավարների: Սոցիալ-դեմոկրատական կառավարությունը արյունաբեղդ և անում բանվորների ապստամբությունները:

Առբերդային իշխանությունը վենդրիայում ու նրա տապալումը: Հեղափոխական շարժումները իտալիացին: Գործարանների ու ֆաբրիկաների գրավումը 1920 թվին: Ուժեղ կոմկուսի բացակայությունը իտալական բանվորների մեջ: Ֆաշիզմը ու կապիտալիստների դինամիկան հարձակումը յեփրոպական բոլոր յերկրների բանվորների վրա: Կարմիր և պողետարիատը իշխանության համար՝ չունեալով ուժեղ կոմունիստական կուսակցությունը: (Ողինակներ Գերմանիայի հեղափոխական շարժումներից):

Կենտրոնական նյութը: — Կապիտալիզմը ջնջել և ազդային սահմանները, կապիտալիզմը՝ համաշխարհային յերեվույթի և: Ենթե հեղափոխությունն և ծագում, ապա նույնի կարող մի պետության սահմանում մասը, քանի վոր այդպիսի «առնմաններ» չկան, Հեղափոխությունը հաղթական ալիքով պիտի ծածկե ամբողջ Եվրոպան:

2. բգ գրուց

Արեվելյան յերեկրները յեփրոպական կապիտալիզմություններին են: Ենթոպական կապիտալիզմը աշխարհի մասնակությունը միայն կը զարգացնի իր բոլոր ինդուստրիան: Ենթոպայում կապիտալիզմը հանդես և գալիք վրայիս ինդուստրիալիզմ, իսկ Արեվելում վորպես ինդուստրիալիզմի լուծ:

Արեվելքի ազգայնական շարժումները հառաջապես յերեվույթ են, վորովհետեւ նրանք հարվածում են կոտիտալիզմին: Թյուրք աշխատավորության պայքարը անգլո-ֆրանսիական կապիտալիստաների դեմ, Հեղումական թյուրքիան ու Ս. Խ. Մ.-ը: Հուդումները Հնդկաստանում: Քաղաքացիական պատերազմը Զինասահանում: Արեվելքի յերիտասարդության գերը: Հեղափոխության սստիճանական աճումը ամբողջ աշխարհում: Կոմինտերնը համաշխարհային հեղափոխության շաբան եւ:

Կենտրոնական նյութը: — Կապիտալիզմը, վորպես համաշխարհային յերեվույթ հանդես և գալիք թե Ենթոպայում և թե Արեվելքում: Ազգային շարժումները Արեվելքում հառաջապես յերեվույթ են, քանի վոր

նրանք քանդում են կապիտալիստական հասարակարգի մեջենան ու հնարավորություն են ստեղծում ազգային արդյունաբերության զարգացման համար, վուրը կուժեղացնի պրոլետարիատը միջուկը Առեվելքում:

Յուցմութեներ ՎII բգ օւրիքի առիքուլ՝ Այս յերկու զրույցների ընթացքում, ամենազլիս վորն ե պարզել սոցիալիստական հեղափոխության միջազգային բնույթը: Այս միտքը 1-ին զրույցում պատկերավորվում ե Արեվելուագի հեղափոխական շարժումների առանձին փաստերով, սակայն վոչ մի դեպքում չպետք ե մանրամասնորներ կանգ առնել այդ հեղափոխությունների պատմություն վրա:

Բավական ե մանրամասնորներն թվել բոլորը ու վերլուծել մի վորեւ հեղափոխությունն, որընակ գերմանականը:

2-րդ զրույցը կառուցվում է նույն կերպ, սաւկայն ընդգծվում ե թեմալական շարժումը Տաճկաստանում: Այստեղ կարելի յեւ համեմատել խորհրդային իշխանության, դաշնաների ու մենշեվիկների ունեցած վերաբերմունքը թեմալի հանդեպ:

VIII բգ օւր

Կոմինտերնը, նրա պատմությունը, հակառակորդներն ու գալնակիցները:

1-ին գրուց

1-ին ինտերնացիոնալի բանվորական շարժման արշալույսին: Մարքս, Ենգլես, ինտերնացիոնալի քայքայումը, (առաջ համառություն): 2-րդ ինտերնացիոնալը: Կապիտալիզմի բանվորական շարժման զարգացման դարաշրջանը ազգային շրջանակներում: 3-րդ ինտերնացիոնալի վիլա և զրույցը պատերազմի նախորյակին ու նրա հականեղափոխական դերը:

2 բգ գրուց

Կոմունիստ. III բգ ինտերնացիոնալի կազմակերպչական ձևակերպումը: 1919 թ. I ին կոնգրեսում: Կոմինտերնի կանոնադրության հիմունքները (2, պայմաններ): 3-րդ կոնգրեսը և նրա նշանաբանը՝ «գեպի մասսաները»: 4 բգ կոնգրեսը ու միասնական բանվորական ճակատը: Կոմունիստ. Կուսակցությունը գլխավոր յերկրներում: Պրոֆինտերնը: Գյուղացիական մասների գրավումը դեպի հեղափոխական շարժումները: Գյուղացիական ինտերնացիոնալը:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ Եյուք. — Կոմինտերնը սոցիալիստական հեղափոխության շատրւն ե, վորի շուրջը առաջնաբար համախմբվում են բոլոր ձշմարիտ հեղափոխական կողմանակերպությունները:

Յօւցմօւթեներ. — Առաջին զրույցում ոգտագործվում ե III րդ շարքերում մշտակած կապիտալիզմի անկման մասին յեղած մատերիալը:

Յերկրորդ զրույցում ոգտագործվում ե նախընթաց շարքի մատերիալը:

IX շարք

ՅԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՎԱՐԴԻԱ, Կ. ՅԵ. ԻՆՑԵՐՆԱ- ՑԻՈՆԱԼ

Ենթասահման գվարդիա, Կ. ՅԵ. Ի. (ակնարկներ մուսասահմանի ու Արեգմուտաքի յերիտասարդական շարժման պատմությունից: Յերիտաշարժման ներկա դրությունը: Անդրկովկասյան Կոմյերիտմիության պատմությունը) յերկու զրույց:

X-րդ շարք

Ն. Տ. Ք-ԻՅ ԴԵՊԻ ՍՈՑԻԱԼԻԶՄ

I-ին զրույց

Գրոլետարիտատի գիկատատուրան վորպես յերկարածեկ փոխ ու ցման շրջան հապիտավիզմից գեպի կոմմունիզմը: Ն. Տ. Ք. այդ ճանապարհի անկրածիշտ ետապն ե: Ն. Տ. Ք.-ան ոյությունը՝ պրոլետարիատի ձեռքին և գանվում բարձրագույն հրամանատարությունը, վորը կազմված ե իրենք պետություն ու հենվում ե գյուղացիության վրա, (վառելիքի ու հում նյութի գլխավոր աղբյուրները, ծանր արդյունաբերությունը, աեղափոխության միջոցները, արտաքին առելքուրը): Պետական ու մասնավոր արդյունաբերությունների պայքարը: Ուսարյերկոյա կապիտալի աշխատանքը մեզանում մեր հսկողության ներքո:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ Եյուք. — Ն. Տ. Ք.-ը պրոլետարական հեղափոխության հապն ե, ուր դասակարգային պայքարի եյությունը փոխադրվել ե պետական ինդուստրիայի անտեսական ասպարեզը, վորած նա

պայքարում ե ոտարյերկրյա ու հայրենական մասնավոր կապիտալի զեմ:

Տ-րդ զրույց

Արդյուք խորհրդային իշխանությունը կոմմունիզմ ե: Կոմմունիզմի եյությունը՝ ամեն մեկից պահանջվում ե ըստ իր կարագության, ամեն մենակն արվում ե ըստ իր կարիքի: Անհրաժեշտության թագավորությունից գեպի ազատության թագավորությունը:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ Եյուք. — Համաշխարհային սոցիալիստական հեղուկությունը ու պրոլետարիատի դիկտատուրան: Կոմմունիզմի ուղին: Կոմմունիզմը ապադասկարգային հասարակությունն ե:

XI-րդ շարք

ԻՆՉՊԵՍ ԴԱՐՆԱԼ ԿՈՄՈՒՆԻՍՏ

Ինչպես սովորել Մարքսիզմը: Ի՞նչպես պետք ե սովորենք իլյիչին: Ինչպես դառնալ ատեկսատության բնագիտական հիմնավորումը), Ինչպես պետք ե ապրի կոմմունիստն ու կոմսոմոլիստը՝ կենցաղ. բարոյականություն, կոմսոմոլիստի արտականությունները անհատական կյանքում, ի՞նչ ե պահանջում կոմսոմոլը իր անդամներից: Ի՞նչ ե սպասում կուտակցությունը կոմսոմոլից:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ Եյուք. — Մարքսիզմը ապստամբած պրոլետարիատի գաղափարախոսական զենքն ե: Դասակարգային ակտիվության համար անհրաժեշտ է դասակարգային աշխարհայեցողություն:

Այս ծրագիրը բաղկացած ե 18 զրույցից, 25 պարագաներից, 6 զրույց թողնված ե կրկնության, ուժեղացաների ու ստուգման համար:

Ո. Կ. ՅԵ. Մ. Ա. Եղովիերկոմի ազիտ
պրոպ բաժին

ՄԵԹՈԴԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 1-ԻՆ ՅԵՎ 2-ՐԴ ԿԱՑԵԳՈՐԻԱՅԻ ԽՄԲԱԿԱՆԵՐԻ ԾՐԱ- ԳՐԻ ԱՌԹԻՎ

1. Մատերյալի արագ յուրացումը ապահովելու և քաղիմքակի անդամների հետ ծանոթանալու համար վերջիններս քաղիմքակը մանելիս յենթարկվում են

վորոշ ուսումնասիցության, պարզվում է նրանց 1) դասակարգային ու պրոֆեսիոնալ պատկանելիությունը՝ 2) նաև նկան աշխատանքը միաւթյան մեջ 3) զարգացման և աշխատունակուաթյան աստիճանը (գիտելիքների ստուգում չպիտի կատարել, վորովհետև քաղլսը բակի անդամը ալդեն պատկանում է այս կամ այն կատեգորիային):

Առաջին յըկու կետերը պարզվում են հարցաթերթիկ միջոցով, վորի համար նկատի յեն առնըվում նուև հետեւյալ կոնկրետ տվյալները՝ վմբ ձեռնարկության մեջ և աշխատել քաղիմբակի անդամը, վորքան ժամանակով և ի՞նչ պաշտօնով և այլն:

Զարգացումը և աշխատունակությունը ըստ հնատրավորի վարոշվում է հոգեբանական փորձերի միջոցով (սրանց նկարագիրը կուղարկվի լրացուցիչ կերպով): Հարցաթերթիկների ու հոգեբանական փորձերի արդյունքները հնարավորություն կը տան վորոշելու դասազան խմբակներին համապատասխանող մեթոդները համաձայն նրանց առանձնահատկությունների:

2. 1 ին կտտեգորիայի տարրական խմբակների դպրոցներում, ուր զիտելիքների ծավալը ծայր աստիճանի սահմանափակ և ուր նորեկները ինքնաշխատության համար շատ քիչ են վարժված դեկավ արք իր ուշացրությունը պետք է կենտրոնացնի նրա վրա, վորպեսզի դասավանդման ընթացքում սովորողների մեջ ինքնաշխատության ունակությունները զարգանան: Ուստի այստեղ ավելի լավ է զիրառել պարագամունքի հետեւյալ մեթոդը՝ նախ կարճառութ ձեզով դասավանդել և ապա դասախոսի զեկավարությամբ կազմակերպել զրույց: Մի ունկնդրի հարցին պատասխանում են մյուսները, վորոնք գիտեն: Ինքը զեկավարը մի շարք հարցեր և տալիս, վորոնց պատասխաններն ունկնդիրների հիշողության մեջ կամրացնեն տվյալ պարագմունքի նյութը: Ավելի լավ հիշելու նպատակով, յուրաքանչյուր զրույց վերջացնելիս, կազմակերպում են կոլեկտիվ զրույցներ ու կազմվում կոնսուլտաներ: Զրույցի վերջում առաջարկում եք քաղիմբակին ձեզակերպել դասի գլխավոր միաբար վերջում զեկավարը ամփոփում և այդ բոլորը ու տա-

լիս և իսկական ձեվակերպումը, վորը և զրի յեն առնում քաղիմբակի բալոր անդամները:

3. Պետք է ձգտել, վոր զրույցները շոշափելի ձեռնով ու գեղարվեստականորեն ավանդվեն: Այդ պատճառով, վարակի հնարավոր և զրական գեղարվեստական պատկերավորում տալ, դասընթացքի կետերը պետք է կապել ընթերցանության հետ ու քաղիմբարկի անդամները պիտի զրական գեղարվեստական գործերի վերլուծություն կատարեն:

Անցածը հիշողության մեջ ամրացնելու նպատակով, յերկրորդ կատեգորիայի սովորողները կ. Յե. Մ. տեղական ակումբներից մեկում, վորը կցված է դըպուցին, կատարում են ընթերցանություններ, պատմություններ, զրույցներ իրենց անցած գեղարվեստական գրասենյանության մասին:

4. Պատմության, անհետական ձեվերի պատմության և տնահետական աշխարհագրության շուրջը կազմակերպված զրույցների ժամանակ պետք է լայն կերպով կիրառել շրջակայությունների մեթոդը դեպի պատմական թանգարանները, գործարանները, արհեստանոցները, անայնազործական ձեռնարկությունները և այլն:

Անեն մի հքսկուրսիա դպրոցում անցած նյութը շոշափելի յե գարդսում և նյութ է տալիս նկարազրական ընդունակությունների պարզացման համար. եքըսկուրսիայի արդյունքները, տվյալները և ստացած տեղեկությունները գրի յեն առնվում: Գրանցումները զեկավարների համար վորպես աղբյուր են ծառայում վորոշելու սովորողների խոսքի, զրի և գատողության զարգացումը:

5. Կեկավարները պարապուր են պարապմունքի որագիր պահել: Դասավանդման բոլոր բացերի մատնանշումը, քաղիմբակի անդամների նկատելի առանձնահատկությունները պետք է դրդեն, լավագույն մեթոդներ կիրառելով, աստիճանաբար կատարելագործի դասավանդումը:

6. Պարապմունքներին հսկելու համար առանձին ստուգություններ չպետք է լինեն: Սովորողների ակադեմիայի և հաջողության աստիճանը նկատում է ինքը

ղեկավարը նըանց ինքնուրույն աշխատանքի բնթացքում (հարցերի, պատասխանների, դիկուրումների և ռեփերատների միջոցով):

I-ին կատեգորիայի համար գպլոցի պարագանենքների վերջում կտզմակերպվում և գրավոր աշխատանքներ նոր նյութերի շուրջը, վորոնք ցույց կտան դատողության և ստեղծագործության ընդհանուր զարգացման ասպարիզում ձեռք բերված հաջողությունները:

II բրդ կատեգորիայի համար կազմակերպվում են մի շարք զեկուցումներ, զրույցներ, վորագործադրակը, ավարտած կոմսոմոլիսաները ցույց կատարելուն նյութի ինքնուրույն ամրապետության և ուրիշներին հաղորդելու դատողության զործում:

7. Քաղիմմբակի անդամների գիտության ստուգումը այսպիս և կատարվում.— Ամեն մի սովորողի համար պահում են անձնական գործ, վորագործադրակը ավարտած կոմսոմոլիսաները ցույց կատարելուն նյութի ինքնուրույն կազմակերպությունները և դիտողությունները: Պարագանենքների վերջում արվում են մանրամասն բնույթագիր՝ թե ինչպիս և յուրացված դասընթացքը. վորքան ոն զարգացած ընդհանուր ընդունակությունները և խմբակն ավարտելուց հետո ինչ գործնական աշխատանքի պետք կդան Կ. Յե. Մ. մեջ:

2-րդ կատեգորիայի քաղիմմբակում կարելի յեկիրառել հետեւյալ միջոցը՝ ղեկավարը մտտնանշում և առաջիկա զրույցի նյութի մասին համապատասխան գրականությունն. Պարուղմունքներն ընթանում են զրույցի ձեզով, աստիճանուրար անցնելով փոքրիկ զեկուցումների, վորոնք անում են սովորողները կարդացած գոականության շուրջ:

ԱՅՕ-ի (պատկերավորման գեղարվեստի բաժին) խմբակները պատրաստում են պատկերավարդող նյութեր, վորոնք ցուցադրվում են պարագանենքների ընթացքում: Նայած սովորողների հաջողությանն առաջակել նըանց, վոր իրենք բացատրեն ցուցադրված նյութը և պարզ ավյալները իրենք պատրաստեն: Ամեն մի պարագանենքը վերջում կունեկաիվ կերպով պահպառակում և մշակված հարցի կոնսուլեկտը:

7/Ա. 1922

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՎԱՐԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆՎԱՐԱԿԱՆ

«Ազգային գրադարան»
NL0239081

53. 825



ԳԻՆՆ Ե' 10 ԿՈՐԵԿ ԶԵՐՎ.

